



<<Նոր ժամանակի կրթություն>>

ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեմա՝ ընտանիքի
հոգեբանություն կոնֆլիկտներ
Առարկան՝ մաթեմատիկա
Հետազոտող ուսուցիչ՝ Սուսան Մերունյան
Ուսումնական հաստատություն՝ Արգավանդի
միջնակարգ դպրոց**

Երևան 2022

Բովանդակություն

- 1) Հետազոտական աշխատանքի կառուցվածքը
 - . Ներածություն
 - . ----- գլուխ
 - . Եզրակացություն
 - . Օգտագործված գրականության ցանկ

- 2) Հետազոտական աշխատանքի նպատակ
 - . Փոնել ընտանեկան կոնֆլիկտների պատճառները

- 3) Հետազոտական աշխատանքի խնդիրները
 - . Փոնել կոնֆլիկտների լուծման ուղիները
 - . Ի՞նչ դեր ունեն կոնֆլիկտները երեխայի դաստիարակության մեջ

Ներածություն

Մեզանից յուրաքանչյուրն իր կյանքում բազմաթիվ անգամ բախվել է կոնֆլիկտների հետ և յուրաքանչյուրիս էլ հետաքրքրել է, թե ինչպե՞ս կարելի է շրջանցել դրանք, իսկ եթե կոնֆլիկտն անխուսափելի է, ապա ինչպե՞ս այն լուծել: Հատկապես այժմ, երբ կանգնած եք << մեծ կյանքի >> շեմին, ներանձնային կոնֆլիկտները միշտ էլ անհանգստացնում են ձեզ: Որպեսզի կոնֆլիկտների պատճառով չանհանգստանաք և չտագնապեք, ծանոթացեք, կոնֆլիկտների հոգեբանական հիմունքներին:

Կոնֆլիկտների ուսումնասիրությամբ զբաղվում է կոնֆլիկտոլոգիա գիտությունը: Կոնֆլիկտները բարդ և բազմաձև դրսևորումներ ունեցող սոցիալ-հոգեբանական երևույթներ են:

Կոնֆլիկտը հակադարձ միտումների, ձգտումների, դրդապատճառների բախում է, որի հետևանքով անձն ապրում է խնդրահարույց իրավիճակ: Կոնֆլիկտի կողմնակիցներ են համարվում այն սյուբեկտները, ովքեր մտնում են փոխհարաբերության մեջ կամ բացահայտ, երբեմն էլ թաքում հովանավորում են կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերին: Կոնֆլիկտի առարկան այն է, ինչի պատճառով կոնֆլիկտն առաջացել է: Կոնֆլիկտի դրդապատճառներ են դիտվում ներքին այն ուժերը, որոնք անձանց դրդում են սոցիալական փոխհարաբերության, կոնֆլիկտության:

Ընտանիքի բնութագրերը

- Դա քաղաք է, որ մենք պետք է կառուցենք
- Նավահանգիստ, որտեղ քեզ սպասում են
- Սեղանի չորս ոտքեր, որ միացած են իրար հետ մեկ երեսով
- Գեղեցիկ ծաղկեփունջ
- Ծիծեռնակի բույն
- Լողարան լցված տաք ջրով և ճոխ փափուկ փրփուրով
- Մարդիկ են, որոնց հետ կյանքում հաճելի է
- Արվեստի գործ է
- Նվագախումբ է, որ նվագում է մի երաժշտություն
- Դա տանիք է, որ պաշտպանում է հողմից ու բուքից
- Դա այն է, որ յուրաքանչյուրը փորձում է գտնել պաշտպանություն մենակությունից
- Արևային նավահանգիստ կյանքի օվկիանոսում
- Երկու տարբեր մոլորակներ, որ ունեն ընդհանուր մթնոլորտ
- Նման է ծառի այգու մեջ
- Անձրևանոց, որ պաշտպանում է ձյունից, անձրևից
- Փոքրիկ տիեզերքն է
- Ցախավել է, որը դժվար է կոտրել
- Հոգեբանական փակ շղթա

Եղած մետաֆորիկ բնութագրություններից բացահայտվում են ընտանիքի այնպիսի հատկություններ, ինչպիսիք են.

- Ամբողջականությունը – ներառումը և միացումը
- Հուզական մտերմությունը
- Պաշտպանվածությունը
- Որոշակիությունը
- Պատասխանատվությունը
- Կորստի վտանգը
- Գեղագիտականությունը
- Սոցիալական անհրաժեշտությունը

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառները

1. Ամուսնական դերերի և պարտականությունների բաշխումը
2. Հայացքների տարբերությունն ամուսնական կյանքի և միջանձնային հարաբերությունների վերաբերյալ
3. Անբավարարվածությունը և հակասությունները սեքսուալ ոլորտի հարաբերություններում
4. Ամուսիններից որևէ մեկի հիվանդությունը և մյուսի հարմարվելը դրան
5. Ազդեցության և իշխանության բաժանման խնդիրը
6. Ամուսնական փոխհարաբերություններում հուզական ջերմության, մտերմության և վստահության պակասը
7. Տարբերությունները և հակասությունները երեխայի դաստիարակության հարցում
8. Երեխայի և ծնողների փոխհարաբերությունների հուզական ջերմության և մտերմության պակասը
9. Երեխայի զարգացման տարիքային և անհատական առանձնահատկությունների չիմացությունը
10. Դպրոցի առաջադիմության ցածր մակարդակը
11. Երեխայի վատ սովորությունները և արարքները
12. Խանդ
13. Միասին մեծ ընտանիքով ապրելը, կենցաղը
14. Ամուսինների ծնողների հետ հարաբերությունները, բարդույթները
15. Ընտանիքի եկամուտների բաժանման պրոբլեմը

Ընտանիքի հետազոտման բարդությունները

1. Ընտանիքը ներառում է բազմապիսի փոխհարաբերություններ և կապեր, որոնք անընդհատ փոփոխվում են ու բազմաշերտ են և գրեթե անհնար է մշակել հետազոտման հստակ մեթոդներ:
2. Առայժմ հոգեբանության մեջ չկան ավարտուն ու բոլորի կողմից ընդունված մեթոդներ, որ հնարավոր լինի ախտորոշել ընտանիքի պրոբլեմները:
3. Ընտանիքի հոգեբանության և հոգեթերապիայի համար հետազոտությունները առնչվում են սոցիալական-հասարակական կյանքի հետ, որտեղ կարևոր տեղ ունեն <<սոցիալական կարծրատիպերը>> (стереотипы), ուստի ընտանիքի մասին գաղափարների ձևավորման վրա ներգործում են առօրյա փորձը և տիպը, որը ըստ էության սահմանափակ գիտելիք է ընտանիքի մասին:
4. Ընտանիքում տեղի ունեցող շատ իրողություններ գաղտնի են, փակ, փոփոխական և չունեն հստակ եզրագծեր:

Խորհրդատվության սկզբունքները, փուլերը

Գոյություն ունեն ընտանիքի խորհրդատվության հիմնական յոթ փուլեր, որոնք պետք է պահպանվեն որոշակի հերթականությամբ

1. Փոխհասկացման հաստատում

Հաջողված խորհրդատուն միշտ ջանում է լինել բաց, ընկերական մաներայով և ցուցաբերել անկեղծ հետաքրքրություն այցելուի նկատմամբ: Խորհրդատուն ցուցաբերում է էմպատիա և ըմբռնում այցելուի իրավիճակը, ստեղծում վստահության և հարգանքի մթնոլորտ: Սակայն պետք չէ ձգձգել այդ պրոցեսը, այլապես այցելուն ավելի կխճճվի իր ապրումների ու մտքերի մեջ:

Կարելի է սկսել միանգամից այսպես.

- Ինչպե՞ս եք դուք այստեղ ձեզ զգում: Հարմա՞ր է ձեզ: Դուք առաջին անգամ եք գրուցում խորհրդատուի հետ: Ես շատ ուրախ եմ, որ դուք որոշել եք գալ գրուցելու:
- Դուք կուզեի՞ք, որ ձեզ անուն ազգանունով կոչեմ, թե՛ ուղղակի պարոն / տիկին:

Այս ամենը պետք է ասվի հանգիստ տոնով և գեղեցիկ շարժումներով: Եթե կա երեխա, կարելի է մեկնել ձեռքը, բարևել և հարցնել անունը:

Մարդու վրա դրական է ազդում, երբ դուք գտնում եք որ այդ պրոբլեմը ռեալ գոյություն ունի, և որ այցելուի ռեակցիան համապատասխանում է այդ պրոբլեմին, և որ այցելուի ռեակցիան համապատասխանում է այդ պրոբլեմին, և որ ըստ երևույթին դա կարող է պատահել ուրիշ մարդկանց նույնպես:

- Ըստ երևույթին ձեզ դժվար է հարց քննարկել: Թվում է, որ ձեզ մոտ հիմա ծանր շրջան է, որն էլ ձեզ ճնշում է:

Կամ...

- Թվում է, որ դուք ձեզ զգում եք միայնակ այս դժվար վիճակում: Ես հասկանում եմ, որ դա ձեզ տխրեցնում կամ վշտացնում է:

Այցելուն պետք է ընդունի խորհրդատուին որպես զինակից և միասին փորձում եք լուծել պրոբլեմը և որ այցելուին չենք քննադատում, որ նա ունի պրոբլեմ և չունի լուծման ճանապարհ:

2. Անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքում

Այցելուի հետ կոնտակտ հաստատելուց անմիջապես հետո սկսում ենք հավաքել տեղեկատվություններ:

- Համառոտ նկարագրությունը պրոբլեմի:
- Երեխաների կամ մեծերի բնութագիրը համառոտ:
- Ընտանիքի տիպիկ օրվա նկարագրումը:
- Մանրամասն տեղեկություններ ընտանիքի կազմի մախշֆ:

Այս ամենը կարելի է հասցնել մեկ կամ երկու հանդիպումների ընթացքում:

3. Պրոբլեմը ճշգրիտ որոշելը, որոշակի դարձնելը

- Ունենալով ինֆորմացիա խորհրդատուն ստեղծում է աշխատանքային հիպոթեզ, հիմնվելով նաև նախորդ նմանատիպ դեպքերի վրա:
- Ցանկալի է բացահայտել թաքնված նպատակները այցելուների մոտ:

- Տեսնել, թե որն է կարևոր, որն է երկրորդական:
- Կարելի է ճշգրտության համար հարցնել՝

4. Երկրնտրանքի փնտրումը

Այցելուն և խորհրդատուն միասին փնտրում են նոր հնարավորություններ պրոբլեմի լուծման համար: Երկրնտրանք միշտ կա, բայց ցավոք նրանք նկատելի չեն կոնֆլիկտի պատճառով: Հենց այստեղ է որ խորհրդատուն գորեղ է...

- Գուցե մեզ հարկավոր է նորից նայել խնդրին և տեսնել, արդյոք չեք տեսնում խնդրի լուծման այլ ճանապարհ, ավելի կոնստրուկտիվ / կառուցողական:

Այստեղ արդեն մեծանում է հնարավորությունը, որպեսզի այցելուն և խորհրդատուն սերտ համագործակցեն, միասին վերլուծեն խնդիրը ավելի ազատ...

5. Նոր համաձայնությունների կնքում, ուղղորդող միջոցներ, երաշխավորումներ

Երբ այցելուն տեսնում է, որ խնդիրը չի լուծվում, ապա նա համաձայնվում է փոխել սխեման, վարքը: Այստեղ հետին պլան են գնում պեսիմիզմը, ուրիշներին խիստ քննադատելը, ծանր ապրումները :

Խորհրդատուն հարմար պահ է գտնում և նոր միջոցներ առաջարկում ու երաշխավորում: Արդեն նա կարող է ազդել այցելուի վրա փոխելու նրա տրամադրությունը և վարքագիծը:

Չե՞ք ցանկանում փորձել արլ ճանապարհով լուծել առաջացած խնդիրները ուղղակի փորձիր համար:

6. Ընտանիքին հենարան կանգնել

Խորհրդատուն պետք է իմանա, որ յուրաքանչյուր ընտանիք, որը եկել է Խորհրդատվության կարիք ունի աջակցման, սատարման և քաջալերման: Այդ իմաստով հարկ է շեշտել ընտանիքի ուժեղ կողմերը, լավը, առաջնայինը: Այս հառցի վրա հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել:

7. Սխանսի արդյունքների ամփոփում

Խորհրդատուն պետք է միշտ հակիրճ , հստակ, պարզ ձևակերպի իր մտքերը և ասի այն միջոցների մասին, որոնք կիրառելի են խնդրի լուծման համար: Կարելի է խոսել

համաձայնության մասին և ամփոփել այնպես ,որ նոր հանդիպման մասին որևէ բան չասել:

Ընտանիքում Գոյություն ունի Մի քանի տիպի հարաբերություններ

- 1.Նյութական
- 2.Ինտիմ հարաբերություններ ամուսինների միջև
- 3.Իրավական
- 4.Հոգևոր և բարոյական
- 5.Սեփականասիրական
- 6.Տարիքային-հարազատական -հայր-մայր-քույր-եղբայր
- 7.Ազգակցական-բարեկամական տատ-պապ....

Ընտանիքի ձևավորման հիմքում ընկած են հաղորդակցման և փոխ- ըմբռնման կուլտուրան, մակարդակ

Այստեղ կարևոր դեր ունի դիրքորոշումը – այն կետը, ուր խաչվում են ամենատարբեր գործոններ՝ փորձը, գիտելիքները, նյարդային համակարգի վիճակը, մարդու ընկալումը մարդու կողմից /Բողայով/ և այլն...

Սակայն դիրքորոշում կարելի է նույնիսկ խոսքով ստեղծել ...

Մեզ հաճախ թվում է, թե մենք ամեն ինչ գիտենք միմյանց հետ հաղորդակցվելու մասին, սակայն ծնվում են դժգոհություն, վիրավորանք... ինչ անել.

1. Լինել ուշադիր և զգայուն,
2. Պահել տակտը նույնիսկ ցավակցելու դեպքում,

3. Սովորել լսել թե ինքդ ինչ ես ասում և լսել դիմացինիդ
4. Լսելով գրուցակցին, աշխատել, ջանալ հասկանալ նրա կարծիքը, որքան էլ այն անհմաստ թվա, չգոռալ վեճի ժամանակ,
5. Միշտ համբերել, ընտրել հարմար բառեր, արտահայտություններ,

Ընտանիքի հոգեբանության հետազոտման համընդհանուր և նեղ մասնագիտական մեթոդները

Վերջին ժամանակներս մշակվել են մեծ թվով խոսքային և ոչ խոսքային մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս մեծ ճշտությամբ հետազոտել ընտանիքի հոգեբանությունը: Ընտանիքի հոգեբանության ուսումնասիրման հիմնական մեթոդներն են.

1. Դիտում – Դիտումը հետագա իրադաճությունների հաջորդական գրանցմամբ ընտանեկան այս կամ այն իրադարձությունում մասնակից չի դառնում ընտանիքիանդամների գործողություններին: Դիտման կիրառումները պետք է լինեն կոնկրետ փաստեր առանց եզրահանգումների

2. Կոնկրետ իրավիճակների վերլուծման մեթոդ – Այս մեթոդի միջոցով իրենց բազմակողմանիության մեջ ուսումնասիրվում են ընտանեկան կոնկրետ իրավիճակներ , թեստերի կիրառում կենսագործունեության ուսումնասիրում և այլն:

3. Հարցում – քանի որ հարցում անցկացնել ընտանիքի անդամների բոլոր անդամներից հնարավոր չէ, հոգեբանը աշխատում է կոնկրետ մարդու հետ: Հոգեբանը պետք է ուշադիր լինի հարցի ձևակերպման ժամանակ: Լավ հարցեր պետք է առաջ բերեն բազմապիսի պատասխաններ: Հարցումը կարող է անցկացվել հեռախոսագրույցի միջոցով: Հարցման արդյունքները, պահանջում են բարեխիղճ ուսումնասիրում:

4. Վիճակագրական մեթոդ – Ստացված արդյունքների և նրանց միջև գոյություն ունեցող կապի կարևորության հաշվարկման համար կիրառվում է մաթեմատիկական վիճակագրություն: Վիճակագրական մեթոդները օգտակար են տարբեր «կախվածությունների» ուսումնասիրման համար, բայց նրանք սահմանափակ են քանի որ թույլ չեն տալիս հայտնաբերել պատճառահետևանքային կապերը:

5. Փորձարարական – Սա միակ մեթոդն է, որը թույլ է տալիս հստակ սահմանել, որ ինչ-որ գործոնի առկայության իր հետևից բերում է մեկ այլ գործոնի ի հայտ գալը:

Մեթոդը կիրառողը պետք է այնպիսի ընտացք տա գործընթացին, որ կարողանա հայտնաբերել երևույթների պատճառները ու նրանց կապը: Ընտանիքի տեսական սխեմաների ու կոնցեպցիաների ուսումնասիրման գործում մեծ ներդրում ունի ամերիկացի գիտնական Հիլը: Ըստ նրա ընտանիքի հետազոտման ընդգծված կառուցվածք ունեցող մոտեցումները 5-ն են՝

- Պատմական մոտեցում
- Ֆունկցիոնալ – կառուցվածքաին մոտեցում
- Ինտերակցիոն – դերային անալիզ
- Հոգեբան – իրադրաին մոտեցում
- Չարգացման մոտեցում

Առաջին երկու մոտեցումները ուղղված են ընտանիքի դերերի ու ֆունկցիաների դինամիկաին ուսումնասիրման: Իսկ վերջին փ մոտեցումները հանգում են անհատի և խմբի սոցիալական վարքի տեսությունը:

Ընտանիքի ուսումնասիրման դժվարությունները

Ընտանիքի ուսումնասիրումը ուղեկցվում է մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններով: Ուսումնասիրման դժվարությունները կապված են ինչպես առարկայի բարդության, այնպես էլ հոգեբանական գիտության տերմինալոգիայի ոչ բավարար լինելու հետ: Բացի այդ հայտնի են շատ թվով անձի հոգեբանության ուսումնասիրողների, բայց հենց ընտանիքի հոգեբանությունն ուսումնասիրողների թիվը մեծ չէ: Ընտանեկան հոգեբանության մասին օբյեկտիվ գիտելիքներ ձեռք բերել հնարավոր է նրա ֆունկցիոնալ – դերային վերլուծման, ընտանիքի անդամների միմյանց հետ ունեցած հարաբերությունների և այլնի միջոցով: Ընտանեկան հոգեբանության ամբողջական ուսումնասիրումը ենթադրում է նրա դիտարկումը որպես նրա վրա ներգործող պատճառների ու գործոնների ամբողջության:

Ընտանիքը որպես սոցիալական փոքր խումբ

Ընտանիքում ձևավորվում և զարգանում են ամուսնաընտանեկան հարաբերություններ, որոնք բազմաթիվ միջանձնային կապերի, արժեքաին համակարգի և սոցիալ - հոգեբանական ակնկալիքների արտացոլում են հանդիսանում: Այս տեսակետն արտահայտել է Չախարովը: Ըստ նրա ընտանիքը միակ խումբն է, որը մեծանում է ոչ թե դրսից մարդկանց ներգրավվելու այլ երեխաների ծնվելու շնորհիվ: Սոցիալ հոգեբանության մեջ փոքր խումբ են անվանում մարդկանց խումբը, որը կապված է ընդհանուր գործունեությամբ, միջանձնային հարաբերությունների համընդհանրությամբ, որն արտահայտվում է սիրո և կապվածության միջոցով՝ փոքր խումբը ոչ միայն միջնորդ է հանդիսանում հասարակության – անհնար հարաբերություններում այլև նրա միջոցով անհատը իրագործում է յուրացրած սոցիալական իդեալները: Ընտանիքը սոցիալ – հոգեբանական հանրույթ է, փքր խումբ, որի անդամները կապված են ամուսնական և բարեկամական / ցեղաին / կապերով և հարաբերությունների կենցաղի ընդհանրությամբ և միմյանց նկատմամբ փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ: Փոքր խումբը մասնավորապես ընտանիքը, ոչ միայն մարդկանց միջև տեղի ունեցող որոշակի կապեր են, այլև կապեր որոնցում դրսևորվում են որոշակի սոցիալական հարաբերություններ և որոնք միջնորդված են այդ մարդկանց համատեղ գործունեությամբ: Ընտանիքը որպես սոցիալական փոքր խումբ օժտված է միայն իրեն բնորոշ մի շարք հոգեբանական առանձնահատկություններով: Դրանք են՝

- Մի շարք ընտանեկան նպատակների առակայություն որոնք կարող են փոփոխել ընտանիքի զարգացման գործընթացը,
- Ընտանիքի անդամների հետաքրքրությունների ու դիրքորոշումների տարբերությունը,
- Ամուսնական զույգի առկայությունը, որոնց փոխհարաբերությունն էլ մեծամասամբ բնորոշում են ընտանեկան փոխհարաբերությունների բնույթը,
- Նրանում ընդգրկված են տարբեր սերունդների ներկայացուցիչներ և նրա անդամների ծանոթության ժամանակահատված ավելի մեծ է քան այլ խմբերում,
- Ընտանիքի անդամները կապված չեն ընդհանուր գործունեությամբ, ինչպես այլ խմբի անդամները,
- Ընտանեկան հարաբերությունների բազմակողմանիությունը, նրանց կապը և կարևորությունը
- Ընտանիքի անդամների բաց խոցելի լինելը

Բացի հոգեբանական առանձնահատկություններից ընտանիքին բնորոշ են նաև սոցիալ-հոգեբանական գործընտացներ, որոնցից է հանդիսանում հաղորդակցությունը:

Ներընտանեկան հաղորդակցմանը բնորոշ են 3 փոխկապակցված կողմեր

կոմունիկատիվ, ինտերակտիվ և պերցոնալ: Կոմունակտիվ կողմը կայանում է ընտանիքի անդամների միջև ինֆորմացիայի փոխանակման մեջ:

Ընտանիքում Գոյություն ունի

Մի քանի տիպի հարաբերություններ

1. Նյութական
2. Ինտիմ հարաբերություններ ամուսինների միջև
3. Իրավական
4. Հոգևոր և բարոյական
5. Սեփականասիրական
6. Տարիքային-հարազատական -հայր-մայր-քույր-եղբայր
7. Ազգակցական-բարեկամական տատ-պապ....

Ընտանիքի ձևավորման հիմքում ընկած են հաղորդակցման և փոխ-

ըմբռնման կուլտուրան, մակարդակ

Այստեղ կարևոր դեր ունի դիրքորոշումը – այն կետը, ուր խաչվում են ամենատարբեր գործոններ՝ փորձը, գիտելիքները, նյարդային համակարգի վիճակը, մարդու ընկալումը մարդու կողմից /Բողայով/ և այլն...

Սակայն դիրքորոշում կարելի է նույնիսկ խոսքով ստեղծել ...

Մեզ հաճախ թվում է, թե մենք ամեն ինչ գիտենք միմյանց հետ հաղորդակցվելու մասին, սակայն ծնվում են դժգոհություն, վիրավորանք... ինչ անել.

1. Լինել ուշադիր և զգայուն,
2. Պահել տակտը նույնիսկ ցավակցելու դեպքում,
3. Սովորել լսել թե ինքդ ինչ ես ասում և լսել դիմացինիդ

4. Լսելով գրուցակցին, աշխատել, ջանալ հասկանալ նրա կարծիքը, որքան էլ այն անիմաստ թվա, չգոռալ վեճի ժամանակ,
5. Միշտ համբերել, ընտրել հարմար բառեր, արտահայտություններ:

«Ընտանեկան կյանքի ցիկլ» հասկացության մեկնաբանությունը

Ընտանիքի կյանքի ցիկլը նրա կյանքի պատմությունն է, ժամանակի մեջ նրա շարունակությունն ու դինամիկան, որն արտացոլում է ընտանեկան իրադարձությունների կանոնավարությունն ու կրկնվելու ունակությունը: Ընտանեկան ցիկլի մասին գաղափարը հոգեբանության մեջ առաջ է եկել XX-րդ դարի 40-ական թվականներից: Այդ հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է 1948թ Դյուվալի և Հիլմի կողմից: Ընտանիքն իր զարգացման ընթացքում որոշակի փուլերով է անցնում որոնք ընդհանուր առմամբ նման են նրանց, որ անցնում է անհատը օնտոգենեզի ընթացքում: Ընտանեկան կյանքի ցիկլի փուլերը կապված են ընտանիք ստեղծելու, ընտանիքում նոր անդամների և «Հին անդամների հեռացման» հետ: Ընտանիքի կազմում տեղի ունեցող այս փոփոխություններն էլ շատ բանով փոխում են նրա դերային ֆունկցիաները: Ի սկզբանե տարբերում էին ընտանեկան կյանքի ցիկլի 24 փուլ: 60-ական թվականներին ընտանեկան կյանքի ցիկլի գաղափարը սկսեց դիտարկվել հոգեթեոսպիաի շրջանակներում և նրա փուլերի քանակը նվազեց մինչև 7-8-ի: Գոյություն ունեն ընտանեկան կյանքի տարբեր դասակարգումներ, որոնց համար հաճախ ելակետային է համարվում խնդրի սպեցիֆիկական, որը պետք է լուծի ընտանիքը որպես խումբ իր հետագա գործունեությունն ապահովելու համար: Մեծամասամբ դասակարգման ժամանակ հիմնվում են ընտանիքի կառուցվածքում երեխաների տեղի փոփոխման վրա: Վերջին ժամանակներում ընտանեկան կյանքի ցիկլի նոր տեսակներ են առաջարկել Անտոնովը ու մեդկովը: Նրանք գտնում են, որ ցիկլը որոշվում է ծնողական փուլերով, որոնք 4-ն են:

1. Նախածնողական փուլ – ամուսնության գրանցում և առաջնեկի ծնունդ.
2. Վերարտադրողական – ծնողական փուլ առաջին և վերջին երեխաների ծնունդի միջև ընկած ժամանակահատվածը
3. Մոցիալիզացված ծնողական փուլ – Առաջնեկի ծնունդից սպասելիքների ունեն այդ դերի և դրա միակ կրողի նկատմամբ: Պայքարն այստեղ ծավալվում է միևնույն դերի շրջանակներում: Հարմարման գործընթացում դրսևորվում է կոնֆլիկտի անվանումը: Մա այն դեպքն է, երբ տվյալ դերը կրողը իր պատկերացումներով ու սպասելիքներով չի համապատասխանում այդ դերին ամրագրված որոշակի պարտականություններին և հաստատված դերային վարքին:

Ընտանիքի տիպերը ըստ Վիտեկի

Չեխ դեմոգրաֆ և սոցիոլոգ Կ. Վիտեկը ամուսինների հուզական հարաբերությունների սեփական գիտական հետազոտությունների հիման վրա առանձնացրել է ընտանիքի 6 տիպ՝ իդեալական ամուսիններից մինչև բաժանման եզրին գտնվող: Նրանցից յուրաքանչյուրին բնորոշ են սոցիալ-հոգեբանական իրենց բնութագիրը:

1. « Իդեալական » ամուսնությանը հատուկ է ամուսինների մաքսիմալ փոխադարձ կապվածության, միասին լինելու ձգտում, բարոյական սկզբունքների պահպանում, լիակատար երջանկության ու բավարարվածության զգացում:
2. « Ընդհանուր առմամբ լավ » , կայուն ամուսնությունը բնութագրվում է հավատարմությամբ զուգընկերոջն ու ընտանիքին: Չնայած ժամանակ առ ժամանակ հանդիպող դժվարություններին ու հիասթափություններին ամուսինները ձգտում են առավելագույն հարստացնել իրենց հարաբերությունները: Ամուսնության այս տիպն կարելի է դասել նաև այն ամուսնությունները, որոնք պահպանվում են հանուն երեխաների և ամուսինների միջև առանձնապես հուզական կապվածություն չկա: Այդուհանդերձ զուգընկերոջից բաժանումը կամ կորուստը որպես ծանր հարված է ընդունվում: Կայուն կարելի է համարել նաև իներցիայով փոխադարձ համաձայնությամբ կատարված ամուսնությունը: Այս դեպքում զուգընկերոջից բաժանումն կամ կորուստն չի ընդունվում որպես ծանր հարված:
3. Հուզականորեն խանգարված, բայց շարունակական պոտենցիալ ունեցող ամուսնությունը կարող է ուղեկցվել անընդհատ վեճերով:
4. Գիտակցված անհավատարմությամբ, հուզականորեն խանգարված ամուսնության դեպքում յուրաքանչյուրն ապրում է իր հետաքրքրություններով և ազատ ժամանակը ամուսինները չեն ձգտում միասին անցկացնել:
5. Ամուսնալուծության եզրին գտնվող ամուսնություններում ամուսինների մոտ առկա է այն մտքի գիտակցումը, որ ամուսնական հավասարություն այլևս գոյություն չունի:
6. Կործանված ամուսնությունը ընկերական միություն է, որը փաստացիորեն դադարել է իր գոյությունը:

Հոգեբանական դիսկոմֆորտ, լարվածություն: Եթե ընտանիքի անդամները չեն կարողանում բավարարել նյութական պահանջմունքները ապա առաջ է գալիս ընտանեկան դեպրիվացիա:

Ընտանեկան տիպերը ըստ Գոլդդի

Հայտնի սոցիոլոգ Գոլդդն առանձնացնում է ընտանիքի հետևյալ 3 տիպերը:

1. Ավանդական ընտանիք – ընտանիքի այս տիպը տարածված է զարգացող երկրներում Միջին Ասիայում և Կովկասում: Այդպիսի ընտանիքներում ուշադրություն են գրավում ոչ միայն միջանձնային հարաբերությունները, այլ սոցիալ – մշակութային դրվածք ունեցող հարաբերությունները ընտանիքի անդամների միջև: Երեխաների դերը այս ընտանիքում հստակ է, երեխան չպետք է ակտիվ ներգրավի ընտանեկան կյանքի մեջ, հարգի և անվերապահորեն կատարի մեծահասակների պահանջները: Ընտանեկան այս համակարգը գործում է մինչև այն ժամանակ, երբ երեխան սկսում է լուրջ դիմադրություն ցույց տալ:
2. Երեխայակենտրոնական ընտանիք – Ընտանիքի այս տիպը եվրոպայում պատմականորեն ի հայտ է եկել XVIII – XIX դարերում: Այս տիպի ընտանիքներում անկախ այն հանգամանքից սիրո՞ւմ են, արդյոք, ամուսիններն իրար, թե ոչ երեխայի նկատմամբ « թույլատրվում է » տարածել ջերմ զգացմունքներ: Եթե ավանդական ընտանիքներում փոխհարաբերության հիմնական ձև է հանդիսանում հարգանքը «հեղինակության» նկատմամբ, ապա երեխայակենտրոն ընտանիքները կապող օղակ է հանդիսանում «երեխայի երջանկությունը» : Այսպիսով հենց սկզբից երեխան ընտանիքում կենտրոնական տեղ է զբաղեցնում և ծնողները նրա համար են ապրում: Երեխան որոշակի իշխանություն ունի ծնողների նկատմամբ և ինչ-որ չափով կարող է դեկավարել նրանց:
3. Ամուսինների ընտանիք – Այս տիպի ընտանիքներում հիմնական են հանդիսանում ամուսինների միջև հարաբերությունները: Նրանց հարաբերությունները դիտվում են որպես հավասարազոր զուգընկերների հարաբերություններ, որը հիմնված է միմյանց նկատմամբ հարգանքի համբերատարության ու բարյացկամության վրա: Այդպիսի ընտանիք ստեղծվում է կողմերի ազատ ընտրությամբ երեխա և ընտանիք ունենալու նպատակով: Այս տիպի ընտանիքում ի տարբերություն նախորդ 2 տիպերի կարող են երեխաներ ընդհանրապես չունենալ կամ ունենալ է երեխա: Այդ ամենը չի խանգարում նրանց հարաբերություններին, իսկ երեխայի հետ հարաբերությունները նույնպես հիմնվում են փոխադարձ հետաքրքրությունների հարգանքի վրա:

Եզրակացություն

Ընտանեկան կոնֆլիկտները կարող են մեծ ազդեցություն ունենալ երեխայի ուսումնահետազոտական գործընթացի վրա: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ, վարքի խանգարում, որոշ դեպքում երեխայի մոտ կարող է առաջանալ վախի զգացում, ինչպես նաև մեղքի զգացում: Այս ամենի արդյունքում երեխան ունենում է ուշադրության պակաս, չի կարողանում կենտրոնանալ, որն էլ ազդում է դասապրոցեսի վրա, երեխայի միտքը կենտրոնանում է կոնֆլիկտների վրա և հիմնականում փորձում է դրանք լուծելու ուղիներ փնտրել: Դասապրոցեսի ընթացքում երեխան պետք է գտնվի հոգեբանական հանգիստ վիճակում, որպեսզի կարողանա շարադրել մտքերը և տրամաբանել խնդիրները:

Գրականության ցանկ

1. Կարաբանովա Օ.Ա. Ընտանեկան հարաբերությունների հոգեբանություն և ընտանեկան հարաբերությունների հիմունքներ և ընտանեկան խորհրդատվության հիմունքներ:
2. Կարաբանովա Օ.Ա. Ընտանեկան հարաբերությունների հոգեբանություն և ընտանեկան խորհրդատվության հիմունքներ:
3. Կովալեն Ս.Վ. Պրոց. նպաստ ժամանակակից ընտանիքի հոգեբանություն: